ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 22 » ապրիլ 2025թ. No 2485 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 01/1838-25 առ 17.04.2025թ. փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Ընդհանուր հիմունքներով գրանցման ընթացակարգով գրանցել թվով 5 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝

1)Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5.Դեղի գրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Invalid signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2025 թվականի ապրիլի « 22 » - ի N 2485- Ա հրամանի

# ԳՐԱՆՑՎԱԾ ԴԵՂԵՐԻ ՑԱՆԿ

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Դացեպտոն | ապոմորֆինի հիդրոքլորիդ հեմիհիդրատ | լուծույթ ներարկման | 10մգ/մլ; (5) փամփուշտներ 3մլ պլաստիկե տակդիրում | ԷՎԵՐ Ֆարմա Ջենա ԳմբՀ, Բրյուսելեր Շտրասե 18,07747 Ջենա | Գերմանիա | ԷՎԵՐ Նեուրո Ֆարմա ԳմբՀ, Օբերբուրգաու 3, 4866 Ունտերախ ամ Աթերզի | Ավստրիա | Դ | 22934 16.04.2025 |
| 2 | Վիտապրոստ | շագանակագեղձի հանուկ | դեղահատեր աղելույծ | 20մգ; (20/2x10/) բլիստերում, (60/6x10/) բլիստերում | Նիժֆարմ ԲԸ, 603105, ք. Նիժնի Նովգորոդ, Սալգանսկայա փ., 7, մասնաշենք 1- որակի և բաց թողնման հսկող, Նիժֆարմ ԲԸ, 603105, ք. Նիժնի Նովգորոդ, Սալգանսկայա փ., 7, Ռուսաստան- բալք արտադրող, փաթեթավորող | Ռուսաստան | Նիժֆարմ ԲԸ, 603105, ք. Նիժնի Նովգորոդ, Սալգանսկայա փ., 7 | Ռուսաստան | ԱԴ | 22935 16.04.2025 |
| 3 | Պակլիտաքսել-Տեվա | պակլիտաքսել | խտանյութ կաթիլաներարկման լուծույթի | 6մգ/մլ; 50մլ ապակե սրվակ | Ֆարմաքեմի Բ.Վ., Սվենսվեգ 5, 2031 ԳԱ Հաարլեմ | Նիդերլանդներ | Տեվա Ֆարմասյուտիկալ Ինդաստրիես ՍՊԸ, 124 Դվորա ՀաՆեվիա փ., Թել Ավիվ  6944020 | Իսրայել | Դ | 22936 16.04.2025 |
| 4 | Ավեգրա ԲԻՈԿԱԴ | բևացիզումաբ | խտանյութ կաթիլաներարկման լուծույթի | 25մգ/մլ; ապակե սրվակ 4մլ | ԲԻՈԿԱԴ ԲԸ, տ. 38, մասնաշենք 1, ներքաղ.տարածք գյուղ Ստրելնա, փ Սվյազի, Սանկտ Պետերբուրգ, 198515 | Ռուսաստան | ԲԻՈԿԱԴ ԲԸ, տ. 38, մասնաշենք 1, տար.89, ներքաղ.տարածք գյուղ Ստրելնա, փ Սվյազի, Սանկտ Պետերբուրգ, 198515 | Ռուսաստան | Դ | 22937 16.04.2025 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | Ավեգրա ԲԻՈԿԱԴ | բնացիզումաբ | խտանյութ կաթիլաներարկման լուծույթի | 25մգ/մլ; ապակե սրվակ 16մլ | ԲԻՈԿԱԴ ԲԸ, տ. 38, մասնաշենք 1, ներքաղ.տարածք գյուղ Ստրելնա, փ Սվյազի, Սանկտ Պետերբուրգ, 198515 | Ռուսաստան | ԲԻՈԿԱԴ ԲԸ, տ. 38, մասնաշենք 1, տար.89, ներքաղ.տարածք գյուղ Ստրելնա, փ Սվյազի, Սանկտ Պետերբուրգ, 198515 | Ռուսաստան | Դ | 22938 16.04.2025 |